

Եռանկյուններ 2

Ունենալով լուցկու հատիկներ կարելի է կազմել տարբեր չափի եռանկյուններ: Եռանկյան յուրաքանչյուր կողմը կազմվում է իրար ետևից դրված լուցկու հատիկներից: Լուցկու հատիկները կոտրել չի կարելի: Տրված է լուցկու հատիկների n թիվը: Հարկավոր է գրել ծրագիր, որը հաշվի, թե այդքան հատիկների միջոցով քանի տարբեր եռանկյուններ կարելի է պատրաստել: Նկատենք, որ կարելի է օգտագործել ոչ բոլոր հատիկները:

Մուտքը

Առաջին տողում տրված է թեստերի t քանակը: Հաջորդ t տողերից յուրաքանչյուրում տրված է մի n ($1 \leq n \leq 3000$) ամբողջ թիվ:

Ելքը

Ելքում պետք է արտածել t տող: Յուրաքանչյուր թեստի համար հարկավոր է արտածել մի թիվ՝ պահանջվող քանակը:

Օրինակ

Մուտքը.

2

4

7

Ելքը.

1

5